

22. 401

Ա. ԼԵՂՆՏՑԵՎ

ԱՅԻՍԱՏԱՆՔԻ  
ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ  
ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

331  
—  
2-38

Գ Ե Տ Տ Ա Տ Տ

ԳԱՐԱԳՈՎԱՆ ԳՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՆԱԳՐՅՈՒՆԵՐ  
ՅԵՐԵՎԱՆ • 1939

15 JAN 2010

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՈՒԹԻՒՆ, ՄԻԱՅՆԴ

331  
L-38  
ՄԵ

Ա. ԼԵՂՆԱՅԵՎ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ  
ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Գ Ե Տ Հ Ր Ա Տ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵԵՐԵՎԱՆ • 1939

02 MAY 2013

22401

Առքհրդային ամբողջ ժողովուրդը հսկայական խանդա-  
վառությամբ դիմավորեց կուսակցության ու կառավարու-  
թյան մի շարք միջոցառումները, վորոնք ուղղված եյին  
աշխատանքի սոցիալիստական կարգապահությունն ամրա-  
պնդելուն, մեր հայրենիքի հետազա աճմանն ու ծաղկմանը:  
Բանվորները, ծառայողները, խորհրդային ինտելիգենցիան  
բազմամարդ ժողովներում, թիրթերի խմբադրություններին  
ուղղված նամակներում պահանջում եյին գործուն միջոցներ  
ձեռք առնել անբարենիլ աշխատողների, զատարկապորտ-  
ների, զատարկաշրջիկների, արտադրությունը կազմալու-  
ծողների գեմ: Գումարովներին, չվողներին ու լողիրերին սան-  
ձահարելու անհրաժեշտությունը, աղնիվ, բարեխիղճ աշ-  
խատողներին խրախուսելու անհրաժեշտությունը իր ամբողջ  
ուժով առաջ եր քաշինմ ժողովների այդ ճառերի, Հող-  
վածների, նամակների, բանաձևերի մեջ: Պրակտիկ փորձից  
թելաղրված բազմաթիվ առաջարկներ եյին մացվում, վո-  
րոնք ծնված եյին հայրենիքի հանդեպ, ժողովրդական ու-  
փականության հանդեպ տածած սիրուց:

1938 թ. գեկտեմբերի 20-ին Խորհրդային Սոցիալիստա-  
կան Հանրապետությունների Միության ժողովրդական կո-  
միսարների Խորհուրդը վորոշում հրապարակեց Աշխատան-  
քային դրաւելիներ մտցնելու մասին: Դեկտեմբերի 27-ին  
ԽՍՀ Միության Գերազույն Խորհրդի Նախագահությունը  
հրամագրեր հրապարակեց՝ գերազանցության բարձրա-  
գույն աստիճան՝ Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի կո-  
չում սահմանելու մասին, «Աշխատանքային գերազանցու-  
թյան համար» մեջալ սահմանելու մասին ու «Աշխատան-



2418  
39

А. ЛЕОНТЬЕВ  
СОЦИАЛИСТИЧЕСКАЯ  
ДИСЦИПЛИНА ТРУДА  
Армгиз—Издательство  
полит. литературы  
Ереван, 1939

քայլին արկության համար» մեղալ սահմանելու մասին։ 1938 թ. գեղամբերի 28-ին ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարների Խորհուրդը, Համամիութենական կոմունիտական կոմիտեն (բոլշևիկների) կուսակցության կենտրոնական կոմիտեն և Պրոֆեսիոնալ Միությունների Համամիութենական Խորհուրդը վարչում հրատարակեցին՝ «Աշխատանքային կարգապահությունը կարգավորելու, պետական սոցիալական ապահովագրության պրակտիկան բարելավելու և այդ զործում չարաշահումների դեմ պայքարելու միջոցառումների մասին»։

Այդ վճիռները աշխատանքային նոր վերելք առաջ բերին բաղմամիլիոն մասսաների մեջ։ Նրանք հավանությամբ ընդունվեցին բոլոր աղնիվ աշխատողների կողմից։ Միտինդներում, ժողովներում հնչում ելին անկեղծ, հոգու ամբողջ խորքից բղխող ճառեր, վորոնք համակված են անձնվել սիրով հայրենիքի հանդեպ, ստեղծադրործական սոցիալիստական աշխատանքի համուկ։ Աշխատանքային որինակելի կարգապահությամբ բաղմապատկել մեր հայրենիքի հարստությունները, ամբացնել նրա պատգամանունակությունն ու հզորությունը, արագացնել մեր հետագա առաջնադաշտումը զեալի կոմունիզմ տանող ուղիով—սրանք են աշխատավորների խոհերը, ցանկություններն ու ձգտումները։

Այդ ամենն աշխատանքի սոցիալիստական կարգապահության համար մղվող պայքարի փառավոր պատմության մեջ նոր եղ և նշանավորում։

## I

Սոցիալիզմը նշանակում է շահագործողների համար կատարվող անաղատ աշխատանքը փոխարինել իր համար, իր դասակարգի համար, ամբողջ հասարակության համար աղատ աշխատանքով։ Ատելի բերեց, վորպիսին աշխատանքը յեղել և մի շարք դարերի և հաղարամյակների ընթացքում, վորպիսին նա մնում և և այժմ կավիտալիստական յերկրներում, աշխատանքը սոցիալիզմի յերկրում դարձել և պատի ու փառքի դորժ, արիության ու հերոսության դորժ։

Միայն քողարկված թշնամիները կամ անհուսալի Մանիկովները կարող են գործն այնպես պատկերացնել, թե իբր այդ մեծ փոփոխությունը, աշխատանքի նկատմամբ մարդկանց դիտակցության, մարդկանց վերաբերմունքի մեջ այդ արմատական հեղաշրջումն իրադրծելի յե առանց պայքարելու, հին կարգի ուժի ու սովորությունների դեմ, դարերի ստրկական աշխատանքի աճեցրած հին, փոտած տրադիցիաների դեմ։

Դեռևս Խորհրդային իշխանության առաջին տարիներում, բերկրալի վողունելով «կոմունիստական շարաթուրյակների» մեջ աշխատանքի նկատմամբ մարդկանց նոր վերաբերմունքի ծելերը, լենինը զբում եր, վոր սոցիալիստական կարգը ստեղծում ե աշխատանքի հասարակական կադմակերպման ել ավելի բարձր տիտղ՝ կապիտալիզմի համեմատությամբ։ Հենց զբանումն ե, մատնանշում եր լենինը, սոցիալիզմի ուժի պղբյուրը և անխուսափելի լիակատար հաղթանակի գրավականը։

Նոր, աշխատանքի հասարակական կազմակերպման բարձրագույն տիտը, վորը ստեղծում ե սոցիալիզմը, անհերեակայինի յե առանց աշխատանքի նոր սոցիալիստական կարգապահության։ Աշխատանքի սոցիալիստական կադրապահությունը, ընդգծում եր լենինը, ծնկում ե վո՛չ բարի ցանկություններից և վո՛չ ել պատրաստի ընկնում ե յերկնքից։ Այն դարձնվում ե կատապի պայքարի պրոցեսի մեջ,—մի պայքար, վորի ընթացքում բանվոր դասակարգի դիկտուտուրան վերապատճարակում ե հոկայական մասներին, դորձելով ինչպես համոզման մեթոդով, այնպես ել Հարկադրանքի մեթոդով նրանց վերաբերմումը, ովքեր փորձում են վիժեցնել աշխատանքային կարգապահությունը։

Վոչ մի կարգ չի կարող դոյցություն ունենալ առանց առանձին, աշխատանքի իրեն հատուկ անհրաժեշտ կարդապահության։

«Հասարակական աշխատանքի ճորտատիրական կարգմակերպումը խարսխվում եր գավաղանի կարգապահությունը վրա՝ աշխատանքունիքների ծայրահեղ տղիտության և ծեծկվու-

ծության պայմաններում, —աշխատավորների, վորոնց թալանում ու ծաղրի առարկա ելին դարձնում մի բուռը կալվածատերեր։ Հասարակական աշխատանքի կապիտալիստական կազմակերպումը խարսխվում եր սովոր կարգապահության վրա, և աշխատավորների հակայական մասսան, չնայած բուրժուական կուլտուրայի և բուրժուական դեմոկրատիայի ամբողջ պրոգրեսին, ամենից առաջավոր, քաղաքակրթված և դեմոկրատական հանրապետությունների մեջ մնում եր վորագիս վարձու ստրուկների կամ ճզմված դյուլացիների խալար և ծեծկված մասսա, վորոնց թալանում ու ծաղրի առարկա ելին դարձնում մի բուռը կապիտալիստներ։ Հասարակական աշխատանքի կոմունիստական կազմակերպումը, դեպի վորոն առաջին քայլը հանդիսանում և սոցիալիզմը, խարսխվում և և գնալով ել ավելի խարըսխվելու յե ինչպես կալվածատերերի, այնպես ել կապիտալիստների լուծը տապալած աշխատավորների ազատ և գիտական կարգապահության վրա»<sup>1</sup>։

Այսպիսով, աշխատանքի սոցիալիստական կարգապահությունն, ինչպես յերկինքը յերկրից, տարբերվում և աշխատանքի կարգապահության նախորդ տեսակներից։ Նա նրանցից տարբերվում է ինչպես իր եյությամբ, այնպես ել ծագման յեղանակով։

## II

Ի՞նչպես եր ստեղծվում աշխատանքի ճորտատիրական կարգապահությունը։ Նա աճել է ճորտատիրական ստրուկների բազմաթիվ սերունդների վորոնքին վրա, նրա զվարավոր հիմքերը (ստօն) դյուլացիների խարազանված մեջքերին մարակներով ելին դրվում։ Ճորտերը, Գերցենի արտահայտությամբ, «կնքված սեփականություն» ելին։ Նրանց գնում և վաճառում ելին, թղթախազում տանուլ ելին տալիս և փոխանակում՝ բարակ ու վորսի չների չետ։ Անթիվ տաղանդներ ու ձիքեր ելին հանդչում ճորտատիրական

սարկության խավարում։ Գաղանային գաժանությամբ ճընչում ելին գյուղացիների ասլուամբությունները, —դյուլացիների, վորոնք բարձրանում ելին ընդդեմ մարտակի ճորտատիրական կարգապահության՝ հանուն լավագույն կյանքի։

Ի՞նչպես եր ստեղծվում աշխատանքի կապիտալիստական կարգապահությունը։ Մարքսը «Կապիտալ»-ի մեջ անմոռանալի գույներով նկարակերտում և առաջվա, ճորտատիրական կարգի ավերակների վրա աշխատանքի կապիտալիստական կան կարգապահության առաջացման պրոցեսը։

Մի շաբթ դարերի ընթացքում արյունալի որենքներ ելին ճրատարակվում տուն ու տեղից զրկված ընչազուրկ մարդկանց՝ պրոլետարիատի հայրերի դեմ։

Ով կամովին չեր ցանկանում իր վրա կրել կապիտալիստական շահագործման լուծը, «քարի, հին Անդիմայի» որենքները թույլատրում ելին նրան ճաղկել այնքան, «քանի գետ մարմնի վրայով արյունը չի հոսել»։

Կապիտալը յերկար ժամանակ այդպիսի որենքների, ոկտական իշխանության կողմից կործադրվող ամենավայրագործության կարիքն եր զգում, վորակեսդի ապահովեր իրեն անձրաժեշտ աշխատանքի կարգապահությունը։ Այդպես եր մինչև մեքենայական արտադրության յերեան դալը։ Մեքենաների ներուժությունը, գործադրվության յերեան դալով, արդյունաբերական ուղերձի բանակի կազմակիրմամբ սովոր վոսկերացած ձեռքը սկսեց կապիտալի վարձու ստրուկներին քշել շահագործման ճիրաների մեջ այնպիսի ուժով, վորակեսին չելին կարող առաջացնել տասնյակ ու հարյուրավոր ամենազանացին որենքներն անդամ։ Կարիքն ու քաղցը ստիպում են բանվորն յենթարկվել կապիտալի իրեն ուսար ու թշնամի ուժին, «տնտեսական հարաբերությունների կույր կեղեգումը ամրացնում ե կապիտալիստների տերապետությունը բանվորների վրա»<sup>1</sup>։

1863 թ. Հունիսին Լոնդոնի լրագրերում «Մահ» բացա-

1 Անին, Մեծ նախաձեռնություն, Յերկեր, Հատ. XXIV, էջ 336։

ասպես չափազանց ծանր աշխատանքից» վերտառությամբ զիտողություն լույս տեսավ։ Քսանամյա մողխտուհի Մերի ենք Ռուլին աշխատում եր արքունական մոդայական արևատանոցում։ Սեղոնի յեռուն ժամանակն եր ։ Արհեստանոցը հարուստ կանանց համար շին հաղուստներ եր պատրաստում։ Հարկավոր եր շտապել հաղուստներն անհրաժեշտ եյին պալատական առաջիկա պարագաներն համար։ Մերին առանց ընդմիջութիւ աշխատեց 26½ ժամ։ Սենյակում 30 մարդ կար ։ Աւը չեր բավականացնում։ Մոդեխտուհիները հարկադրված եյին քնել խեղդող նկուղում, յերկուսով մի ժահճակալի վրա։ Աւբաթ որը հիվանդալով, Մերին վախճանից կիրակի որը։ Բժիշկը լոկ կարող եր հաստատել, վոր աղջիկը մահացել ե լեկություն արհեստանոցում կատարած չափազանց յերկարատե աշխատանքից։

Այդ դեպքը Մարքսը բերել է «Կապիտալ»-ի մեջ։ Կապիտալստական յուրաքանչյուր յերկրի պատմության մեջ այլպիսի դեպքեր՝ անհամար շատ են։ Կապիտալի իր հաղթաժրթը կատարում է տղամարդկանց, կանանց ու յերեխաների գիտելիների վրայով, վորոնք խոշտանդվել են չափէց ալեւ աշխատանքից։

Հայոնի յե, վոր կապիտալիստական աշխարհում տասնյակմիլիոնավոր մարդկի ներկայումս զրկված են աշխատանքից ու հացից։ Յեկանուամենայիլ արտադրության մեջ մնացածները դատապարտված են հյուծիչ և ուժից վեր աշխատանքի բոլոր տանջանքներին։ Կապիտալիստները կոնվեյեր սիստեմն օգտագործում են նրա համար, վորպեսի հյուծեն վարձու ստրուկների ամբողջ ուժերը։

Անդիսական արդի կարի արդյունաբերության մեջ համեմայն դեպք աշխատանքի պայմաններն ավելի լով չեն, քան այդ պայմանները յեղել եյին յերեք քառորդ դար առաջ։ Տեխնիկան հսկայական նվաճումներ ե արել, բայց կապիտալն այդ բոլոր նվաճումներն ուղղում ե բանվորների դիմ։

«1934 թ. կոնվեյերային ժապավեն մտցվեց մեծ Փարբեկություն, վորը պատրաստում եր դարրոցական ու սպորտա-

յին զգեստներ և վորը պատկանում եր բաղմաթիվ ֆիլիալներ ունեցող մի Փիբրայի։ Շալվարի արտադրության կոնվեյերի վրա աշխատում եյին 19 աղջիկ, նրանցից 18-ը նոտած են 9-ական հոգի կոնվեյերի շարժվող ժաղավենի յուրաքանչյուր կողմում, ժապավենի, վորը բաժանված ե սեկցիաների, յուրաքանչյուր աղջիկը համապատասխան մեքենայի մոտ, մի աղջիկը կանգնած ե վերջում «ուղղություն տալով» շալվարներին, —նա մեկական շարվար դնում ե ժապավենի յուրաքանչյուր սեկցիայի վրա՝ համարդատասխան ժապավենի շարժման ընթացքին, աղջիկն մի աղջիկը վերցնում է շալվարը շալվարը, յերբ ժապավենն անցնում է նրա մոտից, կատարում և իր ուղերացիան ու շալվարը հետ ե դնում։ Կոնվեյերի շարժման արագությունն այնպես ե հաշվված, վոր յուրաքանչյուր սեկցիան աղջիկա մոտ պահպան ե ուղղի մեկ ու կես բողեք։ Այդ մեկ ու կես բողեքի ընթացքում պետք է կարողանալ վերցնել շալվարը, կարարել ուղերացիան ու հետ դնել տեղը շալվարը։ Այսուհետով, յուրաքանչյուր աղջիկն իր ուղերացիան մի ժամվա ընթացքում 40 անգամ է կատարում, 40 շալվար պատրաստվում է, նրանք պատրաստ են արդակման (ՕԴԵԼԿ) համար։ Մի շարաթվա ընթացքում այդ 19 աղջիկների ձեռքի տակից անցնում ե ընդհանուր հաշվով մոտ 2 հազար շալվար։

Կարելի յի պատկերացնել, թե դա ինչպիսի լարված ու տանջալից աշխատանք է։ Աղջիկներին չի թույլատրվում հեռանալ կոնվեյերից կամ դանդաղեցնել նրա շարժման ընթացքը թեկուզ մի բողեքով, վորքան վոր դա կազմալուծում և աշխատանքը։ Միայն ընդհանուր ընդմիջում զոյտաթյուն ունի՝ տաք բողեք առավայան և քառորդ ժամ՝ կեսուրից հետո։ Բացի դրանից, յեթե աղջիկներից վորեն մեկը պահի (զարժկական մյուսներին՝ ընդհանուր հաշվով ափելի քան տասնհինգ բողեք, աղջիկ ամբողջ բրիդագի աշխատավարձից պահպան ե կորսծ ժամանակի համար։ Այդ կոնվեյերի վրա աղջիկը, վորը սովորական գործարքային աշխատանքի դեմքում կուլատակեր 4 փունտ և մի-

այն 32 չիլինդ 6 պենս։ Առաջին իսկ առավոտյան, հենց վոր կոնվեյերը սկսեց աշխատել, աղջիկների մեջ հիսուերիկա սկսվեց, իսկ նրանցից յերկուսն այնպես վախեցան, վոր աշխատանքը գցեցին, թեև այդ նույն ուղերացիայի վրա նրանք արդեն չորս տարի յեն ինչ աշխատում եյլն»<sup>1)</sup>:

Բանվորուհի Ռուկի մահից անցել է յերեք քառորդ դար։ Բայց կապիտալի տենչը շահույթի նկատմամբ ավելի շատ ե աճել։

Աշխատանքի չափից ավելի ինտենսիվությունը զուլորդվում ե անսահմանորեն յերկար բանվորական որվա հետ։ Որենքով բանվորական ժամերի ձևական սահմանափակումը խոչընդուն չի հանդիսանում ձեռնարկատերերի համար։

Ֆաշիստական յերկրներում անսահման յերկար բանվորական որն աշխատավորների բաժին ե (ստուգական)։ Այսպես, Փաշիստական Գերմանիայում 1939 թ. Հունվարի 1-ից ուժի մեջ ե մտել բանվորական որվա նոր որենքը։ Պաշտոնապես սահմանված ե 60-ժամյա բանվորական շարաթ, այսինքն՝ 10-ժամյա բանվորական որ, բայց բոլոր ձեռնարկություններում, վոր կապված են պատերազմին նախապատրաստվելու հետ՝ 14-ժամյա բանվորական որ և սահմանվում։ Քանի վոր իրականում դերմանական արդյունաբերության ձեռնարկությունների ճնշող մեծամասնությունը կապված ե պատերազմի նախապատրաստության հետ, ապա այդ նշանակում ե, վոր Գերմանիայի համարյա ամբողջ բանվոր գառակարդի համար մտցվում ե 14-ժամյա բանվորական որ։ Փաստորեն ձեռնարկատերերը հնարավորություն ունեն ստիպելու իրենց բանվորներին աշխատել ժամանակի առանց վորեկ սահմանափակման։

Работай! работай! работай!  
Едва петухи прокричат.  
Работай! работай! работай!  
Хоть звезды сквозь кровлю глядят.  
Работай! работай! работай!

Пока не сожмет головы, как в тисках.

Работай! работай! работай!

Пока не померкнет в глазах.<sup>1)</sup>

Այսպես ե արտացոլված կապիտալի վարձու ստրուկների վիճակը Տոմաս Գուդի «Յերդ շապիկի մասին»-ի մեջ։

Ցարական Ռուսաստանում, վորտեղ կապիտալիստական բարկության դորեղագույն կեղեցմանը միանում եր ճորտատիրության անթիվ մնացուկների (пережитки) կեղեցումը, աշխատանքի կապիտալիստական կարգապահությունն աշխատավոր մասսաների գիտակցության մեջ մտցվում եր նույն այդ արյունալի դատաստանների, սովամահության, տմարդի բոնության, չվածած անարդանքի ու ծաղրանքի մեթոդներով։ Լենինը «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» գրքի մեջ բերում ե չմշագործման ամենահրեշտավոր ձևերի բազմաթիվ վառ որինակներ, վորոնք սովորական յերեսույթ ելին ցարական Ռուսաստանում։

Ահա, որինակ, Ոլոնեցկի նահանգի մորթու արհեստագործության նկարագրությունը, վորը, ըստ Լենինի խոսքերի, արված ե պարզամտորեն, բայց գործի մեծ իմացությամբ։ «Վարպետներն աշխատում են որական 15 ժամ ծայրահեղ վատառողջ մթնոլորտում, վատակելով ամսական 8 ոռութի, տարեկան՝ 60—70 ոռություց ավելի պակաս։ Տնտեսաերերի տարեկան յեկամուտը մոտ 5.000 ոռութի... Վարպետներն ամբողջ շաբաթն արհեստանոցումն են ապրում, և տնտեսատերերը կատակի ձեռվ ծեծում են նրանց... ստիպում են կատարել ամեն տեսակի աշխատանքներ՝ խոտ թափառակ, ձյուն մաքրել, ջուր կրել, սպիտակեղեն պարզացրել

1) Աշխատի'ր, աշխատի'ր, աշխատի'ր.

Աքորներն հազի'վ գեռ կոնչում են,

Աշխատի'ր, աշխատի'ր, աշխատի'ր.

Թեկուզ աստղերն տանիքից նայեն ներս։

Աշխատի'ր, աշխատի'ր, աշխատի'ր.

Քանի գեռ գլուխի չի սեղմվել, ինչպես մամլակում։

Աշխատի'ր, աշխատի'ր, աշխատի'ր.

Քանի գեռ աչքը չի մթաղնում։

և այլն։ Աշխատող ձեռքերի եժանությունն ապչեցուցիչ է նաև կարգոպալի իրեն մեջ, իսկ ըրջակայքում դյուղացիները «պատրաստ են համարյա ձրիաբար աշխատելու»<sup>1</sup>։

Ահա դյուղում բատրակներին շահագործելու պատկերը։ «Սդարակատեր-մուժիկները և կողոնիստ-գերմանացիներն իրենց համար «ընտրովի» մարդկանց են վերցնում... վճարում են... 15—20% ավելի բարձր, քան անտեսություններում ընդունված գներն են. բայց այս անտեսատերերի՝ բանվորներից «քամած» աշխատանքի դումարն ել հիսուն տոկոսով ավելի յե»... Այս անտեսատիրոջ մոտ «աղջիկները», ինչպես իրենք են ասում, «գիշեր-ցերեկ չեն ճանաչում»։ Կողոնիստները, հնձվորներ վարձելով, իրենց վորդիներին հարկադրում են փոխեփոխ գնալ շարքի վերջից (այսինքն շտապեցնել բանվորներին), այնպես վոր՝ փոխվալ շտապեցնողներն որվա մեջ յերեք անդամ թարմ ուժերով կանգնում են բանվորներին շտապեցնելու. «Դրանից ե, վոր կողոնիստ գերմանացիների մոտ աշխատած բանվորներին իրենց հոգնատանջ գեմքով ճանաչելն այնքան դյուրին ե։ Ազարակատեր-մուժիկներն ու դերմանացիներն ընդհանրապես խուսափում են վարձել անցյալում կալվածատիրական անտեսություններում ծառայած բանվորներին։ «Դուք մեզ մոտ չեք դիմանա», ասում են նրանք պարզապես»<sup>2</sup>։

Իսկ ի՞նչպես եյին աշխատանքի պայմանները կարվածատիրական եկոնոմիկաներում, վորոնք գերմանացի-կողոնիստների ու ազարակատեր-կուլակների մոտ յեղած բարքերի համեմատությամբ քիչ մնաց թե դրախտ լինելին։ Խերսոնի նահանգի, վորտեղ առանձնապես տարածված եյին միքանի տասնյակ հեկտարների հասնող խոչոր լատիֆունդիաները, բանվորների սանիտարական դրության հետազոտությունը հետեւալ պատկերը պարզեց. «Բանից դուրս յեկավ, վոր շատ դեպքերում բանվորների համար ապրելու շնորհը չկան. յեղած հանրակայացարանները սովորա-

բար չափազանց հակասողչափահական կառուցվածք ունեն. «Հատ հազվագեղ չեն» նաև զիտնաշները (ՅԵՄԼЯՆԿԻ), վորոնց մեջ, որինակ, հովիվներն են ապրում, սաստիկ տուժելով խոնալությունից, նեղվածքից, ցրտից, խավարից, խեղզող մթնոլորտից։ Բանվորների սնունդը շատ հաճախ անբավարար է։ Բանվորական որն ընդհանուր առմամբ տեսում է 12½—15 ժամ։ Այսինքն շատ ավելի յերկար, քան սովորական բանվորական որը խոշոր արդյունաբերության մեջ (11—12 ժամ)։ Աշխատանքի ընդմիջումները սաստիկ չողի ժամանակ պատահում են «իբրև բացառություններ», և ուղղղի հիվանդություններն այսուղև հաղաղությունը չեն»<sup>1</sup>։

Ահա Մոսկվայի նահանգի Բրոննիցկի և Բոգորսկի գավառների կոճակի արհեստագործության նկարագրություն։

«Բանորը 14 ժամ է։ Ապրանքով վարձահատուցելը սովորական է։ Տնտեսատերերի հարարերությունները դեպք բանվորները նահապետական են, այն ե՝ բանվորներին տընտեսատերը կանչում է «տղերք», ու հաշվեգերքը կոչվում է «տղայագերք»։ Հաշվետեսի ժամանակ տնտեսատերը քարուներ և կարգում բանվորների գլխին և յերեք լիովին չի կատարում նրանց «խնդիրները» դրամ տալու մասին»<sup>2</sup>։

Մատուցաբանի և պղնձի արհեստագործության մեջ նույն Մոսկվայի նահանգում բանվորական որը համարվ էր մինչև 19 ժամի։

Ահա կապիտալիստական շահագործման անային ձեռ, Մոսկվայի նահանգի այսպես կոչված «կանացի արհեստագործության մեջ»։ «Թղթի բացումով զբաղված են 10·004 կին. յերեխաներն սկսում են աշխատել 5-6 տարեկան հասակից (!), որական դատումը 10 կոպեկ է, տարեկանը՝ 17 ուորլի։ Կանանց արհեստագործություններում բանորի ընդհանրապես հասնում է մինչև 18 ժամի։ Հյուսելու արհեստագործության մեջ ոկտոսմ են աշխատել Յարեկանից։

1) Լենին. Հատ. III, էջ 460—461 (Հայերն թարգմ.)։

2) Նույն տեղ, էջ 267—268։

պրական դատումը 10 կողեկ ե, տարեկանը՝ 22 ռուբլի<sup>1)</sup>:

Հնդամենը քառասում տարի յե անցել այն որվանից, ինչ գրվել են այդ տողերը, վորոնց մեջ արտացոլված ե միլիոնավոր աշխատավորների սարսափելի կյանքը:

### III

«Կյանքը, յեղբայր Ֆոմա, դրված ե շատ հասարակ. կամ քուրին կոծիր կամ թե ցեխում պատկիր», ուսուցանում և վաճառական Մայակինը ֆոմա Գորդեյեվին Գորկու հոչակավոր վեպի մեջ: Այսպիսին ե կապիտալիզմի գաղանային «իմաստությունը», այսպիսին ե անողոք վայրի որենքը:

Այդ որենքին վերջ տվեց Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխությունը ԽՍՀՄ մեջ: Սոցիալիզմը հասարակության մեջ մարդկանց հարաբերությունները կառուցում ե այնպիսի սկզբունքների վրա, վորոնք արժանի յեն մարդուն: «Մարդկանց փոխադարձ հարաբերություններն արտադրության պրոցեսում՝ այսուղ բնորոշվում են՝ վորպես շահագործումից աղատ աշխատողների ընկերական համագործակցության ու սոցիալիստական փոխադարձ ողնության հարաբերությունները»<sup>2)</sup>:

Աշխատանքը ամեն մի հասարակության հիմունքն ե, ինչպիսին ել լինի նրա կարգը: Դեռ ավելին, աշխատանքը ստեղծել ե իրեն՝ մարդուն. բայց շահագործողների դարեր և հաղարամյակներ տևող տիրապետությունն աշխատանքը դարձրեց ծանր, ատելի լուծ: Ինչպիսին ել լինի շահագործման ձեւը—ստրկատիրական, ճորտատիրական, թե կապիտալիստական,—աշխատավոր մասսաների բաժնը աղքատությունն ու դրկանքներն են, մինչեւ աշխատանքի բոլոր պառակները, աշխատանքով ձեռք բերվող զարդացման և հաճույքների բոլոր միջոցները կտնիում են շահագործող պարագիտական դաստիարակերի ձեռքերում: Սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ մեջ առմիշտ վերջ տվեց այդ դրությա-

1) Լենին, համ. III, էջ 501 (հայերեն թարգմ.):

2) Համկ(բ)կ պատմություն, էջ 171 (հայերեն թարգմ.):

նը, վորը բուրժուազիայի աբրանյակներն ընդհանրապես ամեն մի հասարակության բնական ու անիունի կացություն են հայտարարում:

Սոցիալիզմը մարմնավորեց վորպես իրականություն, հսկայական յերկրի կյանքի անհողողությունը որենքը դարձրեց «ով չի աշխատում, նա չի ուտում» սկզբունքը: Յուրաքանչյուր աշխատավորի համար պարզ ու հասկանալի այդ խոսքերի մեջ մարմնացած ե մեծ իղեա, մի իղեա, վորը յերազել են շահագործվածների ու ճնշվածների անհամար սերունդներ, բոլոր ու ամեն տեսակի անաշխատ վաստակը, ձրիակերությունը, պարագիտիզմը արմատախիլ անելու թղեան:

«ԽՍՀՄ մեջ աշխատանքը աշխատանքի ընդունակ յուրաքանչյուր քաղաքացու պարտականությունը և պատլի գործներ՝ համաձայն «ով չի աշխատում, նա չի ուտում» սկզբունքի»:

ԽՍՀՄ մեջ գործում ե սոցիալիզմի սկզբունքը՝ «յուրաքանչյուրից ըստ նրա ընդունակության, յուրաքանչյուրին՝ ըստ նրա աշխատանքի»:

Այսպես ե ասում ԽՍՀՄ Ստալինյան Սահմանադրության՝ հաղթանակած սոցիալիզմի Սահմանադրության 12-րդ հոդվածը:

Շահագործման վոչնչացումն աշխատանքին ստեղծագործական բնույթ ամեց, վորից նա զրկված եր հաղարամյակների ընթացքում: Արտադրական գործունեյությունը գարձավ միլիոնների հարազատ, սրտին մոտ գործ:

Աշխատավորների հսկայական մասսաներ ներգրավվում են արտադրության կառավարման ու կաղմակերպման մեջ: Ամրանում ե տիրախնամ (ԽօՏՅԱԿՕԵ) վերաբերմունքը աշխատանքի և ամրող արտադրության նկատմամբ:

«Յուրաքուական հասարակության մեջ,—զրում ելին Մարքսն ու Ենդելսը «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» մեջ,—կենդանի աշխատանքը—դա սոսկ միջոց ե նրա համար, վորպեսի կուտակված աշխատանքը մեծացնի, կոմունիստական հասարակության մեջ կուտակված աշխա-

տանքը—դա սոսկ միջոց ենքա համար, վորպեսզի բանութ-  
երի կենսական պրոցեսն ընդլայնի, հարստացնի, թեթե-  
գացնի:

Այսպիսով բուրժուական հասարակության մեջ անցյալն  
չշխռում է ներկայի վրա, կոմունիստական հասարակության  
մեջ ներկան՝ անցյալի վրա»:

ԽՍՀՄ մեջ դիտական կոմունիզմի հիմնադիրների այդ  
հոնքարեղ նախատեսումն արդեն իրականացավ (ըստ-  
ձօս): Մեր յերկրում իրագործված և սոցիալիզմը—կոմու-  
նիզմի առաջին Փաղը: Ամբողջ կուտակված աշխատանքը,  
մեր Հայրենիքի բոլոր հարստությունները միջոց են «ընդար-  
ձակելու, հարստացնելու, թեթևացնելու բանվորների կյան-  
քի պրոցեսը»:

Բուրժուական հասարակության մեջ, մատնանշում եր  
Մարքսը, մի դաստիարակի ազատ ժամանակը վճիռում եր  
աշխատավոր մասսաների ամբողջ կյանքն աշխատանքի ժա-  
մանակ դարձնելու դնուի: Վոչչացնելով այդ հակասությու-  
նը, սոցիալիզմը աշխատանքը մաքրեց շահագործողական  
կարդի ամբողջ ցեխից ու ազականությունից, մարդկության  
պատմության մեջ առաջին անդամ աշխատանքին ստեղծա-  
գործական բնույթ տվեց: Աշխատանքը, ինչպես վոր նրան  
վայել ե, հասարակական կյանքի մեջ կենտրոնական տեղ  
դրակաց: Նա գարձավ մարդու ստեղծագործական զարդաց-  
ման ամենահզոր ազբյուրը, նրա ամհատական ընդունակու-  
թյունների ծաղկման աղբյուրը, նրա ընդունակությունների  
ու ձիրքերի աճման աղբյուրը:

«Բանվոր գասակարգը, վորն իրեն զգում ե վոչ միայն  
իրեւ աշխատող գասակարդ, այլ նաև իրեւ կառավարող  
գասակարդ, ընդունակ և հրաշքների» (Ստալին): Շահագոր-  
ծումից ազատ աշխատողների ընկերական համագործակցու-  
թյան ու սոցիալիստական փոխադարձ ողնության վրա հիմ-  
նված արտադրական հարաբերություններն իրենց մեջ հզոր  
ստիմուլներ են թաղյում, վորոնց հետ ի վիճակի չեմ մրցելու  
կապիտալիստական հասարակության մեջ յեղած աշխա-  
տանքը:

Լենինը ու Ստալինը ԽՍՀՄ մեջ սոցիալիստական շինու-  
րաբության ամենահարուստ փորձի հիման վրա մինչեւ  
վերջը բացահայտեցին սոցիալիստական աշխատանքի մեծ  
աւծը, հասարակական աշխատանքի սոցիալիստական կազմա-  
կերպման վճռողական առավելությունները:

Սոսկա-կազման յերկաթուղու բանվորների կոմու-  
նիստական առաջին շաբաթորյակի մեջ Լենինը տեսավ աշ-  
խատանքի նկատմամբ նոր, կոմունիստական վերաբերմուն-  
քի ծիլերը, տեսավ նախադուչակն այն ժամանակի, յերբ  
աշխատանքը կղանան մարդու առաջնահերթ կենսական պա-  
հանջը: Լենինը բոլշևիկյան կուտակցության և խորհրդային  
Քիմիանության հիմնական ու արմատական խնդիրներից մեկը  
համարում եր ամենուրեք նոր, սոցիալիստական հիմունքնե-  
րով մրցակցություն կազմակերպելը, վորտեղ վնադված են  
կալվածատերերն ու կապիտալիստները: Աշխատանքի նոր,  
սոցիալիստական կարգապահության ստեղծումը նա անվա-  
նում եր ամենաշխատիկալ ու ազնվագույն աշխարհանիք:

Լենինն անզագար ընդգծում եր, վոր այդ խնդրի կա-  
տարումն անհրաժեշտորեն յենթագրում և անողոք պայքար-  
րողերի ու ճրիակերների դեմ, այն ամենքի դեմ, ով ձըդ-  
տում և քիչ տալ հասարակությանը, իսկ նրանից շատ պո-  
կել: «Ամեն տեսակի թուլությունը, ամեն տեսակի տատա-  
նումները, այդ կողմից ամեն տեսակի սանուխմենտալություն  
անելը, —զբում եր Լենինը, —սոցիալիզմի հանգեալ մեծա-  
գույն հանցագործությունները»:

Այն տարիներին, յերբ խորհրդային հանրապետությունը  
յերկարամյա պատերազմի հետեւանքով անտեսական ծանրա-  
գույն փլուզում (բարյուխ) եր ապրում, Լենինը մարդարեա-  
բար մատնանշում եր, վոր սոցիալիզմը հնարավորություն և  
ստեղծում հասնելու կապիտալիզմի համեմատությամբ աշ-  
խատանքի ավելի բարձր արտադրողականության, վոր  
հենց այդ և նոր կարգի դալիք հաղթանակի պավականը:

Ընկեր Ստալինը հսկայական անդադրում հոգացողու-

Քյուն ե ցուցաբերում աշխատանքի նոր, սոցիալիստական կարգապահության ստեղծման նկատմամբ։ Նա մեծ վերակառուցման սկզբին, առաջին հնդամյակի ոկրքին բացահայտեց մասսայական սոցիալիստական մրցակցության առաջին ավելիների պատմական նշանակությունը և ցույց տվեց, վոր մասսաների աշխատանքային հերոսությունն ու աշխատանքային մրցականը հանդիսանում են «մեծ բեկման տարվա» (1929 թ.) հիմնական արդյունքներից մեկը։ Նա ցույց տվեց սոցիալիստական մրցակցության՝ վորպես սոցիալիզմի շինարարության կոմունիստական մեթոդի իսկական դերը։

Վերակառուցման տարիներին ընկեր Ստալինը մորիլի զացիայի յենթարկեց կուսակցությանն ու բանվոր դաստիարդին անողոք պայքարելու աշխատանքի կազմակերպման արմատական թերությունների դեմ։ Հավասարեցման, դժմադրկության, կադրերին անուշադրության մատնելու, արեւական հաշվարկը մոռանալու դեմ։

Յերբ դյուղացիության հիմնական մասսաների դեպի կուտիլյացումը կատարված շրջադարձից հետո զասակարգային թշնամին թունավորիչ ադիտուացիայով փորձեց ներսից խարիսկել կոլտնտեսությունները, թե, իբր, սոցիալիզմի ժամանակ կարելի յե չաշխատել ել, ընկեր Ստալինը իր ժամանակին իմացավ թշնամու այդ մանյովը։ Ընկեր Ստալինը տասնյակ-միլիոնավոր կոլտնտեսականներին դյուրհասանելի (доходчивый) ու հասկանալի խոսքերով պարզաբանեց, վոր սոցիալիզմը հիմնված ե աշխատանքի վրա, վոր այն անմտածելի յե (неумыслим) առանց աշխատանքի, վոր այն ամեն մի ազնիվ աշխատողի համար առաջին անդամ իսկապես բաց ե անում աշխատանքի չնորդակալ ասպարելը։

«Յերեմն ասում են. թե վոր սոցիալիզմ ե, ել ի՞նչ կարիք կա աշխատելու։ Աշխատում ելինք առաջ, աշխատում ենք այժմ, — մի՞թե ժամանակը չե աշխատելուց դադարել։ Սյուպիսի խոսքերն արմատապես սիալ են, ընկերներ։ Դալոգրերի փիլիսոփայությունն ե, և վոչ թե ազնիվ աշխատողների։ Սոցիալիզմն ամենելին չի ժիտում աշխատանքը»

Հնդհակառակը, սոցիալիզմը կառուցվում ե աշխատանքի վրա։ Սոցիալիզմն ու աշխատանքն անբաժանելի յեն միմյանցից։ Մեր մեծ ուսուցիչ լենինն ասել ե. «Ով չի աշխատում, նա չի ուսում»։ Ի՞նչ ե նշանակում այդ, ո՞ւմ դեմ են ուղղված լենինի խոսքերը։ Շահագործողների գեմ, նրանց գեմ, ովքեր իրենք չեն աշխատում, այլ ուրիշներին են հարկագրում աշխատել և հարստանում են ուրիշների հաշվին։ Ե՞լ ում դեմ։ Նրանց գեմ, ովքեր իրենք լոգրություն են անում և ուղղում են շահվել ուրիշների հաշվին։ Սոցիալիզմը պահանջում ե վոչ թե լոգրություն անել, այլ այն, վոր բոլոր մարդիկ աշխատեն ազնվորեն, աշխատեն վոչ թե ուրիշների համար, վոչ թե հարուստների ու շահագործողների համար, այլ իրենց համար, հասարակության համար»<sup>1</sup>։

Լենինի—Ստալինի կուսակցությունը, ջախջախելով սոցիալիզմի թշնամիներին և ամենից առաջ ամենաստորաբոցկիստական-բոլշևիստինական աղեղությունը (հետիւն), նորհրդային Միությանը մեծագույն հաղթանակների հասցրեց։ ԽՍՀՄ գարձավ ամենահզոր սոցիալիստական ինքուստրիալ տերություն և աշխարհում առաջավոր կուեկտիվացած գյուղատնտեսություն ունեցող յերկիր։ Հոյակապ վերակառուցման չնորհիվ սոցիալիստական աշխատանքը զինված դուրս յեկալ ամենաառաջավոր տեխնիկայով։ Յեկարերի ի պատասխան ստալինյան կոչի՝ թամբել նոր տեխնիկան ու քամել այն մինչեւ վերջը—թնդացին ստախանովյան շարժման նախաձեռնողների առաջին ռեկորդները, ընկեր Ստալինը յերկան հանեց այդ շարժման համաշխարհային-պատմական դերը, վորպես մասսաների սոցիալիստական ժրցակցության նոր, բարձրագույն ձևը, վորպես համաժողովրդական մի շարժում, վորը հաղթանակած սոցիալիզմի պայմաններում նախադրյալներ և նախապարաստում աստիճանաբար կոմունիզմի բարձրագույն ֆաղին անցնելու համար։

1) ի. Ստալին, լենինիզմի հարցերը, ել 672, 10-բդ հրատ. (հայերենում)։

Հնկեր Ստալինը, բնութագրելով ստախանովյան շարժման խոր արժանահրը, վորոնք կան սոցիալիստական մերժականության մեջ, ստախանովականների Համամիութենական Առաջին խորհրդակցությանն արտասանած ճառի մեջ ասում եր.

«Կապիտալիզմի պայմաններում աշխատանքը մասնավոր, անձնական բնույթ ունի: Շատ արտադրեցիր, շատ ել ստացիր և ասլրիր քեզ համար, ինչպես դիմես: Քեզ վոչ վոք չենանաչում և ճանաչել չի ուզում: Դու աշխատում ես կապիտալիստների՝ համար, դու նրանց հարստացնում ես: Յել այլ կերպ ինչպես կարող եր լինել: Ճենց նրա համար ել վարձել են քեզ, վոր դու հարստացնես շահապուծողներին: Դու համաձայն չես դրան, մտիր գործադրուրկների շարքերը և քարշ տուր գոյությունդ՝ ինչպես կարող ես, — ուրիշներին, ավելի համակերպողներին կդանինք: Այդ իսկ պատճառով՝ մարդկանց աշխատանքը բարձր չի գնահատվում կապիտալիզմի պայմաններում... Այլ բան և խորհրդային հասարակակարգի պայմաններում: Այսուղ աշխատավոր ժարդը պատիվ ունի: Այսուղ նա աշխատում և վոչ թե շահագործողների համար, այլ իրեն համար, իր գասակարդի համար, հասարակության համար: Այսուղ աշխատավոր ժարդը չի կարող իրեն լքված ու մենակ դդրալ: Բնդհակառակը, մեղ մոտ աշխատավոր ժարդն իրեն զգում և իր յերկրի ազատ քաղաքացի, մի տեսակ՝ հասարակական գործէ: Յել յեթե նա լավ և աշխատում և հասարակությանը տալիս և այն, ինչ վոր կարող և առաջնա աշխատավոր հերոս ե, նա փառքով և պահպանով»<sup>1</sup>:

